ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ՕՐԱԹԵՐԹ

Ամսագիր ամեն 20-ին մի տպագրություն 2 թերթ 20-25 տպագրական մամուլ։ Գնում են հետևյալ պայմաններով։

Ամբողջ տարվա համար 6 ռուբլի, կես տարվա համար 3 ռուբլի, երեք ամսվա համար 1 ռուբլի 50 կոպեկ։ Արտասահման ամբողջ տարվա համար 8 ռուբլի։

Ամեն մի տող 7 կոպեկ։ Եթե մի հոդվածը մի քանի անգամ է տպագրվում, ապա ամեն անգամվա համար 5 կոպեկ պակաս։ Ամեն մի տող 7 կոպեկ։ Եթե մի հոդվածը մի քանի անգամ է տպագրվում, ապա ամեն անգամվա համար 5 կոպեկ պակաս։

այսպիսի՝ իբր թէ հոգեւորականները՝ թէ՛ քաւթեամբ, թէ՛ կաշառքով, թէ՛ այլ պայմաններով կարողացել են և կը կարողանան եպիսկոպոս ձեռնադրուիլ և դնալ թեմերը՝ իբր թէ կառավարելու, բայց իսկապէս իրանց հաճոյքի համար ապրելու և ժողովրդին կեղեքելու։

Եթէ թեմերում որ և իցէ բարեվոխութիւն եղած է, այդ էլ շնորհիւ բարեմիտ աշխարհական անձերի։

Նախորդ տասնձերեք հիման վրայ կարեւոր ենք համարում նկատել որ եպիսկոպոսական ատիճան տալով մեկին՝ դրանով արտում ենք այդ անձնաւորութեան իշխանութիւն ժողովուրդ կառավարելու։ Բայց միթէ՞ կարելի է չմտածել ներկայ միաբանութեան այս անդամներին այդպիսի իշխանութիւն տալ՝ քանի որ իրանք իրանց կառավարել չգիտեն. միթէ՞ եղած եպիսկոպոսները համազատասխան են իրանց բարձր կոչմանը։

Մենք կարծում ենք՝ ո՛չ։

Անձնիշխանաբար եպիսկոպոս ձեռնադրել կաթուղիկոսները մեծ պատասխանատուութիւն են յանձն առած իրանց վրայ և շատ սխալանքներ անելով եղել են ժողովրդի բարեյաջողութեան անմխիթարութեան պատճառ։ Գէորգ և Մակար կաթուղիկոսները՝ մասամբ հանգամանքներից ստիպուած մասամբ իրանց խորհրդականների ազդեցութեան տակ, մի քանի եպիսկոպոսներ ձեռնադրեցին որոնք նիւթապէս և բարոյապէս ցնցեցին եկեղեցին, իսկ ժողովրդի համար պատիժ եղան և տակաւին շարունակում են ցնցել եկեղեցուն և պատիժ լինել ժողովրդին։

Կաթուղիկոսները, մանաւանդ Տաճկաստանից ընտրուածները, միշտ կարող են սխալուել եպիսկոպոսացու ներ ընտրելուն մէջ։ Իսկ եթէ սիմոնականութեան ոգուն ունենան նրանք, կամ նրանց մերձաւոր խորհրդականները, այն ժամանակ շատ անարժան հոգեւորականներ եպիսկոպոս կընձեռնադրուին ինչպէս այդ եղաւ Մանկունաց օրով։

Անարժան եպիսկոպոսներ ձեռնադրելու և հոգեւոր բարձր իշխանութեան սիմոնականութեանը առաջն առնելու համար, հարկաւոր է, մեր խորին համոզմունքով, եպիսկոպոսական ընտրութեան կենտրոնը տեղափոխել՝ ժողովրդին իրաւունք տալով իրան կառավարելու համար եպիսկոպոսացուներ ընտրելու. եպիսկոպոս ձեռնադրել ժողովրդի ընտրութեամբ միայն թեմերի համար և ո՛չ էջմիածնում նստելու և եպիսկոպոսական ոճով սառնալու համար։

Քանի որ կաթուղիկոսները և քահանաները ընտրուում են, ինչո՞ւ և պիսկոպոսները բացառութիւն պէտք է կազմեն (1)։ Մանաւանդ որ կաթուղիկոսները ժողովրդին յանձնելով եպիսկոպոսացուների ընտրողութեան իրաւունքը, իրանք ազատ կը մնան եպիսկոպոսների վարքի և գործունէութեան պատասխանատուութիւնից և իրանց պատիւն ու անունը մաքուր կը մնայ ժողովրդի սրտերում. ժողովուրդն էլ միշտ պատահանքով կը վերաբերի դէպի կաթուղիկոսական գահը։

Հարկաւոր է միայն ընտրողութեան ձեւը և հաշնակը կանոնաւորել և օրէնքի վերածել։

Մենք այստեղ դնում ենք այն պայմանները և կանոնները, որոնցով, մեր կարծիքով, պէտք է ժողովուրդը դէպ-խաւորապէս առաջնորդուի։

Նախ և առաջ պէտք է այնպիսի վարդապետի ընտրել եպիսկոպոսութեան համար որը ազատութիւն լինի, այսինքն գիտենայ սիրել ժողովրդին և սիրել մարդկութիւնը. այս առաջին և գլխաւոր պայմանը պէտք է լինի։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է որ ուսումը երկրորդ գլխաւոր պայման է այդ վեհ կոչման համար։ Եպիսկոպոսացու վարդապետը պէտք է ունենայ ուսումնական աշխատութիւն. եպիսկոպոսացու վարդապետը պէտք է առնուազը 15 տարի ժողովրդի մէջ ապրի՝ միայն այնպիսի վանական թեմերում։ Իրաքանչիւր թեմում առնուազը 2 տարի միայն պէտք է տեղափոխուի մի այլ թեմ. այսպիսով թեմերը կը ճանաչեն վարդապետներին, որոնցից յետոյ կը կարողանան իրանց համար եպիսկոպոսացու ընտրել։ Վարդապետները գիտենալով որ իրանց եպիսկոպոսանալը գլխաւորապէս կախուած է ժողովրդից և ոչ այլ հանգամանքներից, կ՛աշխատեն գրաւել իրանց կրքերը, կը մարզեն իրանց բարոյականութեան մէջ, կ՛աշխատեն ժողովրդի շահերին ծառայել։

Թէ ի՞նչ եղանակով պէտք է եպիսկոպոսացուների ընտրութիւն անել, դրա մասին մենք կարող ենք առել հետեւեալը։ Նախ մի յանձնաժողով պէտք է ընտրուի այն թեմում, ուր եպիսկոպոսի պէտք կայ. այդ յանձնաժողովը կը կազմէ եպիսկոպոսացու վարդապետների ցանկը, նշանակելով իւրաքանչիւրի գործունէութիւնը և ուսումնական աշխատութիւնները։ Երբ վերոյիշեալ ցանկը պատրաստ կը լինի, կը հրատարակուի լրագրների միջոցաւ։ Այդ հրատարակութիւնից որոշեալ ժամանակ յետոյ ժողովուրդը պէտք է հրաւիրուի պատգամաւորներ ընտրել, ամեն ծուխից մի մի անձն։ Պատգամաւորների ժողովը եպիսկոպոսացու կընտրէ յիշեալ ցանկից մէկին՝ ձայների բազմութեամբ, համաձայն ժողովրդի ցանկութեան։ Ընտրութիւնը պէտք է կատարուի գաղտնի քուէարկութեամբ։ Այդ քուէարկութեանը պէտք է ներկայ լինին վերոյիշեալ յանձնաժողովի անդամները, գործակալ քահանայն և երեսփոխը։ Վերջին պաշտօնեաները՝ կատարողական մարմին լինելով՝ չ՛պէտք է մասնակցին ընտրութեանը։

Այսպիսով՝ երբ ժողովրդից կախուած կը լինի եպիսկոպոսացուի ընտրութիւնը, դժուար չի լինիլ և քահանաների ընտրութեան հարցը։

Հայ ժողովուրդը սպասում է Հայ Հայրիկից իր եպիսկոպոսացուի ընտրելու իրաւունքների վերականգնումը, որովհետեւ այդ միակ ճանապարհն է եպիսկոպոսների սանձարձակութեան առաջն առնելու։ Հայ ժողովուրդը մեծ յոյս ունի իր ներկայ Վեհափառից՝ յարաժամ մրմնջելով Դաւթի սաղմոսը. «Ցերեսաց քոց իրաւունք ինձ էղեն և աչք իմ տեսցեն զուղղութիւն։»

ՎԱՂԱՐՇ

«ԱՐՄԷՆԻԱ»Ի ՄԻՋԱԴԷՊԸ

Նախորդ թուով հրատարակեցինք Բաքէ ընկերութեան «Արմէնի» չգենատին առթիւ Ֆրանսական դեսպանատան և Ռ. Դրան միջեւ ծագած միջադեպը, հեռագրալարերէն առնելով։

Կ.պոլսէն հոկտ. 12ին գրուած նամակներ այդ մասին հետեւեալ տեղեկութիւնները կուտան։ Ինօրէի միացած լրտեսներ գործունէութիւն ցոյց տուած լինելու և շնորհների արժանանալու յուսով՝ յայտնած էին խաբել Թիւրք կառավարութեան թէ յանցապարտ Հայեր կը յայտնին Սեւ ծովի նաւահանգիստներէն առանց անցագրերի եւրոպական չոգենաւեր մտնել և փախչիլ դէպի Մարսէյլ։ Ուստի Սուլթանը յատուկ իրատէ հաննց որ Սեւ ծովի եզերքներէն եկող օտարազգի ամեն չոգենաւ երբ վերին Վոսփորի նեղուցի Գաւազի կայարանին առջեւ կանգ կառնէ օրէնքին համեմատ իր առողջական վկայագիրը (patente) ներկայացնելու և նեղուցէն անցնելու թոյլտուութիւն առնելու համար, Թիւրք ոստիկանները երթան այցելեն չոգենաւը և քննեն թէ մտանդաւոր Հայեր կա՞ն։ Սուլթանի այդ հրաման գործադրութեան դրսեւոյթ հոկտեմբեր մէկէն սկսելով։ Առաջին չոգենաւը որ եկաւ Գաւազի առջեւ, մի ռուսական չոգենաւ էր որի առաջին նաւապետը կը գնանար այդ միջոցին և երկրորդն ալ՝ կերեւի թէ ոչինչ չհասկնալով, չդիմադրեց երբ Թիւրք ոստիկանները այցելեցին չոգենաւը ուր իրենց վնասարածներէ ոչ ոք գտան։ Երկրորդ չոգենաւը Ֆրանսական Մէսաժըրի Մարիդիմ ընկերութեան Տօնօ չոգենաւն էր որի նաւապետը՝ կերեւի թէ անգիտութեամբ, առանց բողոքելու թոյլատրեց թիւրք ոստիկանների այցելութեանը։ Բայց գործն ուրիշ կերպարանք առաւ երբ Սեւ ծովի եզերքներէն (Պաթում, Տրապիզոն, Կիրասոն, Սամսոն) եկաւ Գաւազի առջեւ կանգ առաւ երրորդ չոգենաւը, Բաքէ Ֆրանսական ընկերութեան Արմենին։ Առաջ նաւապետը որ շատ լաւ գիտէր քաղիղլասիօն կոչուած գաշնագիրներով Թիւրքիոյ եւրոպական չոգենաւներին տրուած իրաւունքները, պարզապէս յայտարարել թիւրք ոստիկաններին թէ Ֆրանսական չոգենաւը Ֆրանսական հող կը համարուի ուր չկրնար թոյլատրել որ թիւրք ոստիկանները մտնեն ոեւէ պաշտօն վարելու և չթողուց որ ոստիկանն չոգենաւէն ներս դնեն։ Ետոր վրայ, թիւրքերն ալ իրեն մերժեցին հարկ եղած թուղթը տալ վոսփորի նեղուցէն ներս ճանապարհ շարունակելու համար։ Այդ մերժման վրայ, Արմենիի հրամանատարը չոգենաւն անշարժ կեցուց Սեւ ծովի և Վոսփորի միջնակ և փոխադարձ եղելութիւնը հաղորդել դեսպանական գործակատար Պր. ալ լա Պուլինիէռին, քանի որ դեսպանը, Պր. Քամպոն, փարիզ կը գտնուի այժմ։ Պր. Պուլինիէռ լսկոյն գնաց Մեծ Եպարքոսին մօտ և բացատրեց իրեն այսպարագան որ առանց դեսպանատան թոյլտուութեանը Ֆրանսական առևտրական մի չոգենաւ այցելելը քաղաքականութեանն հակառակ է և թէ մի այդպիսի այցելութեան թոյլատուութիւն կրնայ տրուիլ միայն շատ ծանր հանգամանքների մէջ որոնք ներկայ դէպքին մէջ գոյութիւն չունին։ Վերջապէս, Պր. Պուլինիէռի ազդու և անյոզդոզ յայտարարութեան վրայ, Բ. Դուռը պարտաւորեցաւ հրաման դրկել նաւահանգստի վերատեսչութեան որ «Արմէնի»ի թուղթերն յանձնուին իրեն և թոյլատրուի ճանապարհ շարունակելու։ Բայց որովհետեւ «Արմէնի» չոգենաւը այդ պատճառով 48 ժամ Գաւազի առջեւ կեցած և ճանապարհէն ուշացած էր, Բաքէ ընկերութեան կ.պոլսի ներկայացուցիչը Պր. Բըպուլ կը յայտարարէ թէ այդ յապաղումէ 25,000 ֆրանգ վնասկրած է և թիւրք կառավարութենէն կը պահանջէ այդ գումար։

Կըսուի թէ այս միջադէպէ յետոյ եւրոպական բոլոր դեսպանները հաւքուեր և համաձայներ են իրենց մէջ որ եւրոպական չոգենաւերի ոչ մի նաւապետ չթոյլատրէ թիւրք ոստիկաններին իր չոգենաւ այցելելով խուզարկութիւններ կատարելու քանի որ քաղիղլասիօններէն օրէնքին կը պատկանի այդ։

ՆԱՄԱԿ ՓՈԼԻՍԻՑԷՆ

Ռուսճուք, 1/13 հոկտեմբեր 1894

Վերջերս գործել խուզարկութիւններ եղան քաղաքիս մէջ։ Անշուշտ կը յիշեն ընթերցողք երկու տարի առաջուան խուզարկութիւններն ու ձերբակալութիւնները։

Նախորդ ամսոյ 23ին (Հ. Տ.) ուրբաթ գիշերուայ (Ր. Ե.) ժամ 10ի միջոցներ Ոստիկանութեան պետ յր իր օգնականով Հայկական Ընթերցարանն այցելեց ուր ներկայ էին Ե. Ր. Ազգային Ընթերցասիրաց ընկերոջեան վարչութեան անդամներէ ոմանք ու Առենապետը։ Կառավարութեան ներկայացուցիչն ուզեց տեղեկանալ թէ Ընկերութեան նպատակը «Հայ երեսասարդութեան իմացական և բարոյական զարգացման ատաղձ՞» է թէ Հայ յեղափոխականութեան կեդրոն մ՛է հաստատած. յետ յ ատացուղ հայերէն լրագրերու,

հանդէսներու և Ընթերցարանի պատերը զարդարող պատկերներու ցուցակն առաւ. նշանակեց նաեւ Ատենապետի անունը։

Յաջորդ կիրակէ ալ (օգոստ. 25) ոստիկանապետը իւր մարդերով խուզարկեց և փորձ տուաւ Հայու մը տան նկուղը։

Այս խուզարկութեանց նպատակն ի՛նչ որ ալ ըլլայ, յայտնի կ՚ենթադրուի որ թիւրք կառավարութեան միջամտութեամբ է. խեղճը ի՞նչպէս ալ տպայատութեամբ հատատ կ՚ընծայէ իւր լրտեսներու խօսքին, որոնք թիւր տեղեկութիւններով կը խաբեն զինք կատր մը օգորի փոխանակ։

Կը յիշեմ որ ապրիլ ամսին մէջ ալ տեղական կառավարութեան կողմէ վերադիտող ընկերութեան տեարակները քննութեան առնուելան, ատոր դէմ համար թէ նոյն տաւնները ի նպատ ընկերութեան արուած ներկայացման հասոյթը ի՞նչ բանի յատկացուած է։

Կը հարցնեմ. զարմանալի չէ՞ պուլկար կառավարութեան այս ընթացքը։

ԱԲԷԴ-ՇԷՄՍՑ

ՀԱՅԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Պատրիարքական Տեղապահ Գեր. Հմայեակ եպիսկոպոս հոկտ. 14ին (տպագրուած 29) գնացեր է Դատական և Կրօնական գործերի նախարարութեան պաշտօնատունը և նախարար Րիզա փաշան հիւանդութեան պատճառով բացակայ գտնուելուն համար, տեսակցեր է անոր խորհրդական Հալմ պէյի հետ։ Նոքին զեղուցած թիւնը հետեւեալ որ գնացած է նաև նախարար Րիզա փաշայի ապարանքը, որ վաստրի Բոսֆորի Հիսար գիւղին մէջ է, և տեսակցած է Րիզա փաշայի հետ ալ։

— Ձեր դրացիներէն հայադէտ Տիար Տիմիթրիոս Զօլաքիէս որ մեր ազգային պատրիարքարանի օրէնքներն ու այլ և այլ կանոնագիրները յունարէնի թարգմանելով մեզ առատապատ եր Ձեր պատրիարքարանի պաշտօնական թերթին մէջ՝ որմէ արտատպած էին յունարէն ուրիշ բոլոր լրագիրներն ալ, այժմ այդ թարգմանութիւնները առանձին գրքի ձեւով հրատարակած է։

Տիար Զօլաքիէս՝ որ յոյն ազգին մէջ իր վարած պաշտօններէ զատ, մի քանի հայ վարժարաններուն մէջ յունարէնի դասատութիւն ալ կանէ, հայ և յոյն եկեղեցիներն ու լեզուները իրար մանաթայունելու համար երկար տարիներէ ի վեր կաշխատի իր գրչով և այս նոր հրատարակութիւն իր արած այդպիսի հրատարակութիւններ 14րդն է։

— Կարնեցի Սահատարեան վարժարանի երկու ընթացարար աշակերտներն որոնք իրենց տեսչի հետ կ. պոլիս եկած էին, հոկտ. 1/13ին կ. պոլսէն մեկնած են դէպի Աւստրիայի Ոսյխենպերգ քաղաքը ուր բարձրագոյն արուեստագիտական ուսումնարանին մէջ Տիար Գէորգ Ճիկէրճեան պիտի հետեւի արուեստագործական տարրալուծութեան (chimie industrielle) և Տիար Սիմոն Ազապալեան՝ մեքենագիտութեան։ Ատոնց դասընթացքը 3 տարի կը տեւէ որ աւարտելէ յետոյ պիտի վերադառնան Սանահատարեան վարժարանը, այնտեղի արուեստական ճիւղը զարգացնելու համար։

ՀԱՅԵՐ ՅԱՄԵՐԻԿԱ

Ամերիկայի Հայերի նախորդ հոգեւոր Հովիւ Աբժ. Յովսէփ Ծ. Վ. Սարաճեան հոկտեմբեր 10ին Մարսէյլէն անցնելով գնաց Էջմիածին։ Նորին Աբժանապատուութիւն իրրեւ ուխտաւոր կերթայ տեսնել Ս. Էջմիածինը և մեր ազգային ու կրօնական տեսակէտով նուիրական վայրերը Ռուսահայաստանի մէջ։

Նիւ Եորքի Հայերը օգուտ քաղելով այս առթէ, 250 տոլար (գրեթէ 1275 ֆրանգ) յանձնած են Աբժ. Հ. Սարաճեանին, էֆ. կաթողիկոսին ժառանգանելու համար ի նպատ Թիւրքահայաստանցի գաղթականներուն։ Աբժ. Հայր Սարաճեանի Ամերիկաէ մեկնած օրը, Նիւ Եորքի Հայերն ողջերթի մի չքեղ ճաշկերոյթ տուած են իրեն։ Նորին Աբժանապատուութիւն լաւ յիշատակներ թողած է Ամերիկայի մէջ ուր գիտցած էր սիրելի և համակրելի դառնալ ամեն դասակարգի Հայերուն, ի հարկէ բաց ի անոնցմէ որոնք արդէն յանցանք կը համարին հայ եկեղեցական լինելը։

— Ամերիկայի առաջնակարգ հայ վաճառականներէն Տիար Յ. Ս. Թաւչանճեան իր ամուսնութեան առթիվ 10 օսմ. ոսկի (230 ֆր.) նուէր ղրկեր է կ.պոլսի Թատրիւլի Գալֆայեան Աղջկանց Որբանոցին և 20 օսմ. ոսկի (460 ֆրանգ) Ազգային Ս. Փրկչեան հիւանդանոցին։

ԹԻՒՐՔԻԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Իտալական կառավարութիւնն որոշեր է որ Բէրաի իտալական բարձրագոյն և առեւտրական վարժարաններն ընթացարար եղող ամենէն յաջողակ աշակերտները ձրիապէս ընդունին ու դաստիարակուին վենետիկի, Ճենովայի ու Պառիի լիսէներին մէջ։

— Մուշի մէջ քոլէրան անհետացած կ՚երեւի։

— Սուլթանը կայսերական գեղեցիկ մի զբօսանաւ, «Սուլթանկէն», Օրտէսա ղրկեր է որ Ռուսիայի Զարը իր հիւանդութեան պատճառով Քօրֆու գնացած ժամանակ պատուի համար ուղեկցի և առաջնորդէ Կ.պոլսի նեղուցներէն ուրկէ անձանձրոյթ կերպով և միանգամայն առանց դժուարացնող արգելքներէ իր պատերազմանաւով անցնիլ փափաքած է Օգոստափառ հիւանդը։

— Փարիզի օսմ. նոր դեսպան Զիա փաշան հոկտ. 11ին մեկնած է Կ.պոլսէն դէպի իր նոր պաշտօնատեղ։

— Ռոտոսթոյի (Թէքիրտաղ) ֆրանսական հիւպատոսը բողոքած է Ռոտոսթոյի մէջ մի ֆրանսացի հայագործի խանութը թիւրք կառավարութեան անիրաւաբար փակելուն դէմ։ Հիւպատոսը այդ խնդրի համար կ.պոլիս գնացած է։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ

Այս րոպէիս Հռոմի մէջ եկեղեցական մի համաժողով կը գումարուի արեւելեան և արեւմտեան եկեղեցիներն միացման խնդրին վրայ խորհրդակցելու համար։ Լեւոն ԺԳ. պապը չրջաբերական հրաւիրագիրներ ղրկած է արդէն Արեւելքի մէջ գտնուղ կաթոլիկ և ոչ-կաթոլիկ պատրիարքներուն։ Հռոմէական Հայերի Պատրիարք Գեր. Ազարեան, ինչպէս նաև Արեւելքի կաթոլիկ այլ և այլ եկեղեցիներու ներկայացուցիչներ՝ Գեր. Յովսէփ և Գեր. Պէնիի պատրիարքները, Հռոմ կը գտնուին այժմ, Ս. Պապի խորհրդովը համերաշխութեամբ գործելու համար Արեւելքի և Արեւմուտքի եկեղեցիներուն միութեան խնդրի մասին։ Մարմիններէ ժողովի կանչուած չեն որովհետեւ առնանք ամենքն ալ կաթոլիկ են արդէն։ Քաղդէացիներն ալ այս միջոցին պատրիարք չունին։ Արեւելքցի պատրիարքները Պապին ընտրած կարդինալներէն և եկեղեցականներէն կազմուած մի յանձնաժողովի հետ պիտի խորհրդակցին այս կենսական գործի յաջողութեանը համար։ Համաժողովի նիստերին պիտի նախագահէ Րէմսի արքեպիսկոպոս Ֆրանսացի Լանժենիէօ կարդինալը որ Երուսաղէմ գումարուած եկեղեցական համաժողովին ալ նախագահեց։

Մի այսպիսի խնդրի համար եկեղեցական համաժողովի գումարումը կամ նոյն իսկ գումարման հրաւէրը Հռոմի և Արեւելքի եկեղեցիներու յարաբերութիւններուն մէջ պատմական մի նշանաւոր դէպք է անշուշտ. բայց թէ մի այդպիսի միութիւն կրնա՞յ իրագործուիլ, այդ յուսալի չէ որովհետեւ այդ բաժանումները ոչ այնչափ դաւանաբանական խնդիրներէ ծագած են որչափ իւրաքանչիւր եկեղեցու իր անկախութեամբ ինքնապահպանութեան ղգացումէն։ Յունաստանի Քօրֆու կղզին երթալու ճրագները թողած է որովհետեւ մի այդպիսի տեղափոխութիւն այժմ ա՛լ անօգուտ կամ վտանգաւոր կը լինի։

Զարին եղբայր վշտահիր մեծ դուքսը որ Փարիզ կը գտնուէր, լիվաճահէն հեռագրով կանչուած լինելով հինգշաբթի երեկոյ մեկնեցաւ Փարիզէն։

Կայսերական պալատին ատագ քահանայ Եանիչեֆ որ Տարմշթատ կը գտնուէր Զարեւիչի նշանածին, հեծի Ալիքս իշխանուհուն, օրթոտոքս կրօնը ստորագրելու համար, յանկարծ կանչուելով Լիվաճա գնաց Զարին մօտ։ կայսերական ընտանիքէն արտասահման գտնուղ մեծ-դուքսեր ու մեծ-դքսուհիներ վտիճացեր են երթալ Ռուսիա։

Զարի չրջապատողներուն մէջ իր հիւանդութեան մասին զանազան կարծիքներ կան. բայց ամենէն աւելի տիրող կարծիքն այս է թէ երիկամանքի բորբոքում ունեցած է որ ինֆլուէնցայի հետեւանքն եղած է։ Ցայտնի է թէ ինֆլուէնցան որ չատեր ի սկզբան բանի տեղ չէին գներ, ո՛րչափ զոհեր տարաւ 1890 թուականին։ Զարը այդ հիւանդութենէ ապաքինելէն յետոյ, իր անձնական զօրաւոր կազմուածքին վրայ վստահ, չատ զգուշութիւններ չէ արած և ինֆլուէնցայէ դեռ թողած հետքերը սկսեր են կամաց կամաց իրենց ճնշաւոր ազդեցութիւնն տարածել ամբողջ մարմնին վրայ։

Փարիզի Տարիւ փողոցի ռուսական եկեղեցուն մէջ երէկ մաղմանքներ կատարուեցան Զարի բժշկութեան համար։ Ֆրանսայի Հանրապետութեան Նախագահը, նախարարապետը և արտաքին գործերի նախարարը իրենց ներկայացուցիչներ ղրկեցին ատեան եկեղեցին։ Աւելորդ է ասել թէ Զարի այս վտանգաւոր վիճակ ո՛րչափ վիշտ պատճառած է Ֆրանսայի մէջ։

Զարի երիկամանքին աւելի կամ նուազ բորբոքումը և վտանգաւոր մի վախճան ունենալը գուցէ կրնայ Եւրոպայի աշխարհաւարութեան մէջ մեծ փոփոխութիւններու ծնունդ տալ այս միջոցին որ չինաճապոնական պատերազմը Ծայրագոյն Արեւելքի մէջ մեծ խառնակութիւններ գուշակել կուտայ, որ Ա.Ֆրանսայի էմիրին մեծապատ կարծուած ժամը Անգլիոյ և Ռուսիոյ միջեւ ծանր գժտարութիւններու մի դուռ կը բանայ և որ Միջերկրական և կարմիր ծովերուն մէջ եւրոպական պետութիւններուն հակառակ շահերուն մրցումները կրնայ նիւթ տալու մի կերպարանք առած լինել կերեւին։

ՍԵՐԳԻԱՅ ԹԱԳԱՒՈՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Սերպիոյ Ալեքսանդր թագաւորը որ կը ճանապարհորդէ, հոկտ. 14ին Պուտա-Բէշթ հասաւ ուր Աւստրիոյ կայսրը և Յովսէփ արքիդուքսը դիմաւորելէն յետոյ երկաթուղու կայարանը։ հոկտ. 17ին հասաւ Բօզոտամ ուր Ալմանիոյ Վիլհելմ կայսրը իրեն դիմաւորելէ յետոյ երկաթուղու կայարանը և մէկտեղ կառքը նստած գնացին Բօզոտամի կայսերական պալատը։ Հոն

կայսրը երեկոյին մի խնջույք տալով Սերպիայի թագաւորին, բաժակ առաջարկեց անոր կենաց։ Ալեքսանդր թագաւորը ալմանեըէն պատասխանելով չորհակալութիւն յայտնեց կայսրին և կայսերական ընտանիքին իրենց հիւրասիրութեան համար և փափաք յայտնեց որ Ալմանիայի և Սերպիայի միջեւ բարեկամական յարաբերութիւններն աւելի ամրապնդուին։

Վիլհելմ կայսրը Սեւ-Արծիւի պատուանշանը ընծայեց Սերպիայի թագաւորին։

Պատանի Ալեքսանդր թագաւորը մնաղիր է Ալմանացի մի իշխանուհու հետ ամուսնանալ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՑՐԵՆԱՍԷՐ
(ՋԱՔԱՐԻԱ ՍԹՈՑԱՆՈՎ)

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1894

Պուլկարիոյ անկախութեան հերոսներէ մէկին, Զաքարիա Սթոյանովի, որ իր ընդունակութեան և հայրենասիրական ոգեւորութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ գիւղացի հովուի պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վարժապետ, յեղափոխական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիոյ Ազգային ժողովին նախագահ դառնալ, խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան նաեւ Պուլկարիոյ Թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուլկար հայրենասէր յեղափոխականներու գործունէութեանը մասին։ Սկիզբը գրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լէժէի, և Թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն Թարգմանութեանն առթով։

Հեղինակը շատ իրաւամբ կը գրէ իր յառաջաբանի վերջ թէ «Զարմանք պիտի պատճառէ ինձ նթէ ընթերցողներ հետաքրքրութիւնը չգարժի պետական մարդ դարձած մի գիւղացու այս վաւերական պատմութեան վրայ։»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ։

Տարածելու համար մեծ քանակութեամբ առնողներուն 25 % զեղչ կը կինի։

(Պարսկաստանի Հայերուն համար 1 ֆրանգ է։)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ Է ՀԱՑ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ (1794–1894) ՅՈՒԲԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Այս պատկեր որ «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնը հրատարակած է ներկայ 1894 թուականի Հայ ազգին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձը լինելուն առթով, մեծ միաձալ դիրքով է լուսատիպ (phototypique), որի մեծութիւնն է 50 × 35 սանտիմետր, տպուած 70 × 45 սանտիմետր քարտոնի (carton) վրայ այլ և այլ բնագրով։ Մէջ տեղը դրուած է հայ լրագրութեան հիմնադրին՝ Տ. Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի պատկերը, և բոլորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագիրները իրենց խմբագրապետներու պատկերներով։

Գինն է 1 բրլ. 50 կպկ. կամ 4 ֆրանգ, ճանապարհածախսով միասին։ Պարսկաստանի համար 1 րբլ. ոսկի. կամ 2 ֆր. եւ 50 սանթ.

Սոյն առթիւ կը յայտնենք որ լոյս տեսած է նաեւ

Գալէմքեարեան Հ. Գ., Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը։ Հտր. Ա. 1794-1860. մէկ լուսատիպ պատկերով։ Վիէննա Մխիթարեան տպարան 1893։ Գին՝ ճանապարհածախսով՝ բրլ. 1 կամ 2 ֆր. և 50 սանթիմ։

Վերոգրեալ պատկերն ու գիրքը ստանալու համար, դիմել Վիէննա Մխիթարեան Պատուարժան Միաբանութեան որ հրատարակած է զանոնք։

Կարելի է նաեւ ստանալ զանոնք, դիմելով Արմենիայի խմբագրութեան։

ՀԱՑՈՑ ՀԱՑԵՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ
ՄԻՈՒԹԵԱՆ
Ա ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ հանուածոյ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ։ Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը տրկուի 5 ֆրանքով Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ)։

Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար։ անոնք որ պէտք կունենան Արմենիայի միջոցով մէկի դիմումի առնել կամ մի բան յայտարարել, պատրաստ են ընդունելիրենց ծանուցումներ ըստ, լրագրական սովորութեան։ Ծանուցումների գիները նշանակուած են Արմենիայի ճակատը, տառին վրայ հաշուելով. 1 երկաթագրի (գլխագիր) համար 2 սանդիմ և 1 բոլորգրի համար 1 սանդիմ։ 3 անգամ դրուելիք ծանուցումի գինին վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի։ 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնի վրայ 0/0ի 30 զեղչ։ Սակարկութիւն չընդունուիր։

Նշանակ Հայաստանեայց։ Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանաչ, կապոյտ և դեղին գոյներով ներկուած։ 1 ֆրանգ։

ԼՈՒՑԻՆԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սրբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիայի խմբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ մասնաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովին։

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած)։
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ՆԵՆՕԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՕՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Սպառած)
Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(*Հայաստանցիներու պանդխտութեան տխուր հետեւանքներէ մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։*) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.
Զ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ ալբուբեցը աւարտեալ։ (*Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած տպաւորչունչ ընտիր ոտանաւորներէն Յր՝ առանձին տետրակով հրատարակուած են*)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։
Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ ՑԱՃԿԱՀԱՑԱՑՏԱՆՈՒՄ. (Սպառած)
Ը. ԹԻՒՐՔԻԱՒ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (*Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ, Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներու թիւին բազդատական մէկ յուցակն ալ կցուած է տետրակին վերջը։*) Գին 50 սանթիմ (35 սանթիմ)։
Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի ամարչրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն 36ի չափ ամփոփուած են Յուշարարի մէջ որ ութ ամսեայ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ
Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիայի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ Թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթիմ) ,20 սնթմ.
ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՑԱՐԻՈ (Ցունաստանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ Թէ Յոյներն ի՛նչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (0,15սանթիմ) ,20 սանթիմ։

ԺԲ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՅՇՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իրենց նմոյշները զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւնները տակիւրերեան գրած ոտանաւորներուն որոնք ժամանակին հրատարակուած չ՛ լինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրենց նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին կ. Պոլիս տպագրուած ազգային երգարաններուն մէջ՝ որոց վերջին տպագրութիւնն վաղուց արդէն արդիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներուն մէջ։ Նմոյշներու մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրըւած են նաեւ Թէ այդ ոտանաւորները ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 սանթիմ) 15 սանթիմ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՒՆՈՒԱԾ
ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԼՂԱՔԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի Թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներու պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ։ Գին 1 ֆրանք, (75 սանթիմ)։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : François CARRIÈRE
ՄԱՐՍԷԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.